

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ,

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԵԾԱՐԳՈՒ

Հարգելի գործընկերներ, թանկագին հյուրեր,

Այսօր, մենք ականատես ենք սփյուռքի և Հայաստանի մասնագետների համատեղ հետաքրքիր մի ծրագրի: Ծրագիր, որի ակունքներում հայրենիքին ու հայաստանցիներին օգտակար լինելն է: Ծրագիր, որը ոգեշնչված է հայաստանյան օրթոպեդիայում ժամանակակից տեխնոլոգիաներ ներդնելու գաղափարով: Ծրագիր, որի բիզնես բաղադրիչը ակնհայտ երկրորդական է:

Արդյունքում, Երևանի պատմական այս շենքում կազմակերպվել է ժամանակակից «Ուիզմոր Քլինիք» բժշկական կենտրոնը, որը նոր խոսք է առողջապահության մեր համակարգում:

Ծրագրի եզակիությունը ապահովում է թե այն, որ դա

Անգլիական առաջին մեծ ներդրումն է Հայաստանի առողջապահության ոլորտում,

Թե որ նա հագեցված է ՀՀ և տարածաշրջանի համար եզակի սարքավորումներով,

Թե Անձնակազմում ներգրավված ոլորտի առաջատար մասնագետներով,

Թե էլեկտրոնային թվային համակարգ, Ehealth-ի մակսիմալ ներդաշնակությամբ բիզնես պրոցեսներին,

և թե հիվանդանոցաշինության նոր չափանիշների կիրառմամբ:

Ուզում եմ շնորհակալություն հայտնել Մեծ Բրիտանիայում գործող «Ուիզմոր Մեդիքալ» կազմակերպության հիմնադիր տնօրեն Բեդո Եղիայանին, վիրաբույժ Ֆրանսուա Անտոնյանին և Հայաստանի նրանց գործընկերներին՝ Կարեն Քոլոյանին, Հայկ Ավագյանին՝ մեր երկրում նման նախագիծ իրականացնելու համար:

Կենտրոնի կայացման գործում, իհարկե, գնահատելի է Ջավեն Քոլոյանի դերը, ով նաև առողջապահության նախարարին կից երիտասարդ մասնագետների խորհրդի համակարգողն է:

Ես լիահույս եմ, որ կլինիկայում աշխատող ոլորտի առաջատար մասնագետները, արտասահմանցի իրենց գործընկերների հետ, Հայաստանում բարդ և եզակի վիրահատություններ կատարելով՝ շատերի կյանքի որակը կբարելավեն:

Առավել քան վստահ եմ, որ նրանց մշտապես մասնագիտական աջակցություն կցուցաբերեն սփյուռքահայ գործընկերները:

Հարգելի ներկաներ, համոզված եմ, որ բրիտանական կառավարչական գործելաոճը և հայ բժիշկների իմաստնությունն ու փորձառությունը այս կենտրոնի հաջողության գրավական կհանդիսանան:

Հարգելի գործընկերներ, ավարտելով խոսքս թույլ տվեք, օգտվելով առիթից շնորհակալություն հայտնել Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին առողջապահության համակարգի նկատմամբ մշտական ուշադրություն ցուցաբերելու համար: